ՄԵՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ

Երանի՜ էր ձեզ, գովված երգիչներ,
Դուք երգում էիք վաղ առավոտյան,
Երբոր երազներն ապրում էին դեռ,
Ոսկի երազներն հայի փրկության։

Ձեր թարմ երգերում կար մի հայրենիք,
Խրրո՜խտ, վեհապա՜նծ, թեպետև գերի,
Եվ ձեր քընարի ձայներն երջանիկ՝
Լիքը հըրճվանքով գալոց օրերի։

Ա՜խ, նա հոշոտվեց մեր աչքի առջև
Եվ մեր ըզգայուն սըրտերն իրեն հետ,
Ոսկի երազներ՝ միրաժի նըման՝
Մեր անապատում չըքացան անհետ։

Եվ մենք խորտակված մեր կյանքի ծեգից,
Անհույս ու դալուկ, ճակատներըս ցած,
Ընկնում է քընար մեր մատաղ ձեռքից,
Ընկնում են սըրտից և՛ երգ, և՛ Աստված։